

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան

պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

« 26» մայիսի 2012թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն կանոնադրությունը սահմանում է Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի (այսուհետ՝ ԳՊՄԻ) ֆակուլտետների (այսուհետ՝ ֆակուլտետ) գործունեության իրավական հիմքերը:
- 1.2. Ֆակուլտետը ԳՊՄԻ-ի հիմնական կառուցվածքային ստորաբաժանումն է: Ֆակուլտետը կազմված է ամբիոններից, լաբորատորիաներից և ուսումնական ու գիտական այլ ստորաբաժանումներից:
- 1.3. Սույն կանոնադրությունը հաստատվում է, փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի որոշմամբ՝ ռեկտորի ներկայացմամբ:
- 1.4. Ֆակուլտետի պաշտոնական անվանումն է՝
հայերեն՝ _____
ռուսերեն՝ _____
անգլերեն՝ _____
- 1.5. Ֆակուլտետը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ԳՊՄԻ-ի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինստիտուտի ներքին կարգապահական կանոններով:
- 1.6. Ֆակուլտետն ունի իր անվամբ կնիք:

2. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1. Ֆակուլտետն իրականացնում է բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթություն մեկ կամ մի քանի մասնագիտություններով:
- 2.2. Ֆակուլտետն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու որոշումներ, եթե դրանք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը, ԳՊՄԻ-ի կանոնադրությանը, ԳՊՄԻ-ի ներքին իրավական ակտերին և ֆակուլտետի կանոնադրությանը:
- 2.3. Ըստ սահմանված կարգի՝ ֆակուլտետը մշակում է հաստիքացուցակը՝ իրականացվող կրթական, գիտական, ուսումնաօժանդակ և տեխնիկական աշխատանքներին համապատասխան, որը հաստատվում է ռեկտորի կողմից:

3. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

- 3.1. Ֆակուլտետի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը, ԳՊՄԻ-ի կանոնադրությանը և ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների գույակցմամբ:
- 3.2. Ֆակուլտետի կառավարման մարմինը ֆակուլտետի խորհուրդն է (այսուհետև՝ խորհուրդ)՝ դեկանի նախագահությամբ, որն իր իրավասության սահմաններում ընդունում է որոշումներ, որոնք պարտադիր են ֆակուլտետի աշխատողների և ուսանողների համար:
- 3.3. Ֆակուլտետի խորհրդի կազմի մեջ մտնում են՝
 - 3.3.1. ի պաշտոնե՝ ֆակուլտետի դեկանը /նախագահ/, դեկանի տեղակալը, ֆակուլտետի ամբիոնների վարիչները, ֆակուլտետի արհկոմի և ուսանողական խորհրդի նախագահները, դեկանի նշանակմամբ՝ գործատուների ներկայացուցիչները,
 - 3.3.2. ընտրովի անդամներ՝ ֆակուլտետի ուսումնական գործընթացն ապահովող ֆակուլտետի ամբիոնների և այլ ֆակուլտետների ամբիոնների ներակայացուցիչներ՝ համամասնության սկզբունքով,
 - 3.3.3. ուսանողության ներկայացուցիչները /մինչև 25 %/, որոնք ընտրվում են ֆակուլտետի ուսանողական խորհրդի կանոնակարգի համաձայն:
 - 3.3.4. Խորհրդի կազմում ի պաշտոնե նշանակված անդամների թիվը չպետք է գերազանցի կազմի 50 %-ը:
- 3.4. Խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Խորհրդի լիազորությունների ավարտից մեկ ամիս առաջ դեկանը ռեկտորի հաստատմանն է ներկայացնում խորհրդի անդամների նոր ցուցակը:
- 3.5. Խորհրդի նախագահը դեկանն է, ով հրավիրում է խորհրդի նիստերը՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան 8 անգամ մեկ ուսումնական տարում:

- 3.6. Նիստերն արձանագրելու համար խորհրդի անդամներից ընտրվում է քարտուղար:
- 3.7. Խորհրդի նիստի նախագահողը բացում և փակում է նիստը, առաջարկում է նիստի օրակարգը, ապահովում է դրա կատարումը, քվեարկության է դնում օրակարգի հարցերը և անհրաժեշտության դեպքում կազմակերպում է հաշվիչ հանձնաժողովի ընտրությունը:
- 3.8. Խորհրդի նիստն իրավագոր է խորհրդի անդամների ցուցակային կազմի երկու երրորդի ներկայության դեպքում: Որոշումներն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:
- 3.9. Քվորումի բացակայության դեպքում խորհրդի նիստը հետաձգվում է՝ նույն օրակարգով:
- 3.10. Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ռեկտորը կամ պրոռեկտորները:
- 3.11. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում է նիստի անցկացման ժամանակը, նիստին մասնակցող անդամների անվանացանկը, օրակարգի հարցերը, ելույթների հակիրճ բովանդակությունը, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները և ընդունված որոշումները: Արձանագրությունը ստորագրում են նիստը նախագահողը և քարտուղարը, ովքեր պատասխանատու են արձանագրությունը ճիշտ կազմելու համար: Նիստի օրակարգը և ընդունված որոշումները հինգ աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են հրապարակման ԳՊՄԻ-ի համացանցային կայքում:
- 3.12. Ֆակուլտետի խորհուրդը.
- 3.12.1. առաջարկություններ է ներկայացնում ռեկտորին ֆակուլտետի կառուցվածքում ամբիոններ, լաբորատորիաներ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու և լուծարելու վերաբերյալ,
- 3.12.2. ընտրում է ֆակուլտետի ներկայացուցիչներին ԳՊՄԻ-ի կառավարման և գիտական խորհուրդներում, որակի ապահովման կառույցներում,
- 3.12.3. քննարկում է ֆակուլտետի ամբիոնների կառուցվածքային ստորաբաժանումների ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունները,
- 3.12.4. քննարկում է ֆակուլտետի կիսամյակային և տարեկան քննաշրջանների արդյունքները,
- 3.12.5. քննարկում է կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ընդունված որոշումների դեմ ներկայացված բողոքները,
- 3.12.6. անհրաժեշտության դեպքում՝ իր կազմից ձևավորում է մշտական և /կամ/ ժամանակավոր հանձնաժողովներ,
- 3.12.7. քննարկում և ընդունում է որոշումներ ֆակուլտետի կրթական, գիտական աշխատանքների և գործունեության այլ հարցերի վերաբերյալ,

- 3.12.8. առաջարկություններ է ներկայացնում պատվավոր կոչումներ շնորհելու, մրցանակներ, ուսանողական անվանական կրթաթոշակներ նշանակելու վերաբերյալ: Թեկնածություն է առաջադրում ԳՊՄԻ-ի մեղավոր պարզևատրելու, հանրապետական ու միջազգային պարզևների շնորհելու վերաբերյալ:
- 3.13. Ֆակուլտետի խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ (բաց քվեարկությամբ, եթե խորհուրդն այլ որոշում չի կայացրել):
- 3.14. Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է դեկանը՝ իր իրավասությունների սահմանում և ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան: Ֆակուլտետի դեկանի գործունեությունը համարվում է վարչական և գիտամանկավարժական աշխատանք:
- 3.15. Ֆակուլտետի դեկանի (դեկանի տեղակալի) պաշտոնն ընտրովի է: Դեկանն (դեկանի տեղակալն) այդ պաշտոնը կարող է զբաղեցնել ոչ ավելի քան 2 հնգամյա ժամկետ անընդմեջ:
- 3.16. Դեկան կարող է ընտրվել այն պրոֆեսորը կամ դոցենտը, որն ունի գիտությունների դոկտորի կամ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:
- 3.17. Ֆակուլտետի դեկանի տեղակալը պետք է լինի տվյալ ֆակուլտետի ամբիոններից մեկի աշխատակից, ով ունի գիտական աստիճան և կոչում: Ֆակուլտետի դեկանի տեղակալին նշանակում է ռեկտորը՝ ֆակուլտետի խորհրդի առաջադրման հիման վրա: Ռեկտորի անհամաձայնության դեպքում ֆակուլտետի խորհուրդը առաջադրում է մեկ այլ թեկնածու:
- 3.18. Ընտրությունների արդյունքների հիման վրա ռեկտորը ֆակուլտետի ընտրված դեկանի հետ կնքում է 5 տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր և հրամանագրում դեկանի պաշտոնում:
- 3.19. Դեկանի պաշտոնին թեկնածուներ առաջադրելու, ընտրություններ անցկացնելու և դեկանի պաշտոնում հրամանագրելու կարգը սահմանվում է դեկանի ընտրության ընթացակարգով:
- 3.20. Ֆակուլտետի դեկանը.
- 3.20.1. կազմակերպում և վերահսկում է ֆակուլտետի գործունեությունը կրթական, գիտական, միջազգային և այլ ոլորտներում,
- 3.20.2. ապահովում է գիտական խորհրդի, որակի ապահովման հանձնաժողովների, ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը,
- 3.20.3. սահմանված կարգով՝ բուհի ռեկտորին առաջարկություններ է ներկայացնում ուսանողների կուրսից կուրս փոխադրելու, նույն կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, տեղափոխման (այլ բուհից կամ այլ մասնագիտությունից), ուսուցման ձևի փոփոխման, համապատասխան արձակուրդ ձևակերպելու վերաբերյալ,

- 3.20.4. կազմակերպում է ուսումնական դասացուցակների կազմումը և վերահսկում է դրանց կատարումը,
- 3.20.5. վերահսկում է քննությունների և ստուգարքների անցկացման գործընթացը,
- 3.20.6. խրախուսում, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության է ենթարկում ուսանողներին՝ իր լիազորությունների շրջանակում,
- 3.20.7. լուծում է ֆակուլտետի կանոնադրությունից բխող և ֆակուլտետի ուսումնամեթոդական ու գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր,
- 3.20.8. արձակում է հրամաններ, տալիս է հրահանգներ, որոք պարտադիր են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների, աշխատողների և սովորողների համար:
- 3.21. Ֆակուլտետի գործունեության ընթացիկ հարցերի լուծման համար ֆակուլտետում գործում է խորհրդակցական մարմին՝ ղեկանատ, որի կազմի մեջ մտնում են ղեկանը, նրա տեղակալ(ներ)ը, ամբիոնի վարիչները, ֆակուլտետի արհկոմի նախագահը, մեթոդական խորհրդի նախագահը, ուսանողական խորհրդի նախագահը և ֆակուլտետի գործավարը:
- 3.22. Դեկանատը հարցերը քննարկում է ղեկանի առաջարկով:
- 3.23. Ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական հարցերի քննարկման համար ֆակուլտետում գործում է մեթոդական խորհուրդ, որի ստեղծման և գործունեության կարգը սահմանում է ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգով:

4. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- 4.1. Ֆակուլտետի հիմնական ստորաբաժանումներն են ամբիոնները: Ֆակուլտետում կարող են գործել նաև լաբորատորիաներ, կենտրոններ և գիտակրթական ու այլ ստորաբաժանումներ:
- 4.2. Ամբիոնը ֆակուլտետի կրթագիտական գործընթացի կազմակերպման հիմնական կառուցվածքային ստորաբաժանումն է, որը կարող է ներառել սեկտորներ:
- 4.3. Ամբիոնն ապահովում է ուսումնական գործընթացը, իրականացնում է մեթոդական և գիտական հետազոտություններ:
- 4.4. Ամբիոնները գործում են ԳՊՄԻ-ի կանոնադրության, ԳՊՄԻ-ի իրավական ակտերի և ֆակուլտետի կանոնադրության հիման վրա:
- 4.5. Ամբիոնը ղեկավարում է ամբիոնի վարիչը: Ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուներ առաջադրելու, ընտրություններ անցկացնելու և պաշտոնում հրամանագրելու կարգը սահմանվում է ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգով:

- 4.6. Ամբիոնի վարիչը կազմակերպում և վերահսկում է ամբիոնի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ աշխատանքները, ներկայացնում է ամբիոնը ֆակուլտետի, բուհի, բուհական ստորաբաժանումների, ինչպես նաև արտաինստիտուտային կազմակերպությունների հետ հարաբերություններում:
- 4.7. Ի պաշտոնե ամբիոնի վարիչը ֆակուլտետի խորհրդի անդամ է՝ 5 տարի ժամկետով:
- 4.8. Ամբիոնի վարիչը պատասխանատու է ամբիոնի գործունեության համար: Ըստ սահմանված կարգի՝ ամբիոնի վարիչը տարին մեկ անգամ հաշվետվություն է տալիս ֆակուլտետի խորհրդում:
- 4.9. Ֆակուլտետի խորհրդում ամբիոնի վարիչի գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում հրավիրվում է խորհրդի արտահերթ նիստ, որի քննարկմանն է դրվում ամբիոնի վարիչի աշխատանքային անհամապատասխանության և ԳՊՄԻ-ի գիտական խորհրդին ամբիոնի վարիչի պաշտոնանկության (գիտական խորհրդի անդամակցության դեպքում՝ լիազորության ընդհատման) միջնորդության հարցը: Ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումը կայացվում է փակ գաղտնի քվեարկությամբ:
- 4.10. ԳՊՄԻ-ի գիտական խորհրդում փակ գաղտնի քվեարկությամբ ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումն ընդունելու դեպքում ռեկտորը լուծում է ամբիոնի վարիչի հետ կնքած աշխատանքային պայմանագիրը:
ԳՊՄԻ-ի գիտական խորհրդում ամբիոնի վարիչի պաշտոնանկությունը չհաստատելու դեպքում հնգօրյա ժամկետում հրավիրվում է ֆակուլտետի խորհրդի նոր նիստ, որը ղեկավարելու է ռեկտորը: Ֆակուլտետի խորհրդի նիստի մասնակիցների ձայների երկու երրորդով ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումը հաստատվելու դեպքում ռեկտորը երկրորդ անգամ է հարցը քննարկում գիտական խորհրդում, որի կայացրած որոշումը համարվում է վերջնական:
- 4.11. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված են պրոֆեսորներ, դոցենտներ, ասիստենտներ և դասախոսներ:
- 4.12. ԳՊՄԻ-ի ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումն իրականացվում է համաձայն աշխատանքային պայմանագրի:
- 4.13. Ըստ սահմանված կարգի՝ ամբիոնը, ելնելով կատարվող կրթական, գիտական, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական աշխատանքների ծավալից ու ձևերից, մշակում է իր աշխատողների ուսումնական բեռնվածությունը:
- 4.14. Ամբիոնի աշխատանքներն իրականացվում են ամբիոնի աշխատանքային պլանին համապատասխան, որն ընդգրկում է ուսումնամեթոդական, գիտահետազոտական և աշխատանքի այլ տեսակներ:
- 4.15. Ամբիոնի կրթական և գիտական հիմնական հարցերը քննարկվում են ամբիոնի պրոֆեսորադասախոսական համակազմի նիստերում: Ամբիոնի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ղեկանը կամ տեղակալը,

ամբիոնի գիտաշխատողները, ասպիրանտները, ուսումնաօժանդակ համակազմը և այլ աշխատողներ:

- 4.16. Ամբիոնի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարեկան ութ անգամ:
- 4.17. Ամբիոնի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունները ստորագրվում են ամբիոնի վարիչի ու քարտուղարի կողմից:
- 4.18. Կենտրոնների և լաբորատորիաների ստեղծման, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ որոշումն ընդունում է ԳՊՄԻ-ի գիտական խորհուրդը՝ ֆակուլտետային խորհրդի առաջարկությամբ:
- 4.19. Ֆակուլտետի կանոնադրության հավելվածի տեսքով ներկայացվում են տվյալ ֆակուլտետի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները:

Ֆակուլտետի կանոնադրության հավելված

_____ **ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումները**

Ամբիոններ՝

Կենտրոններ՝

Լաբորատորիաներ՝